

ԲԱԺԱՆՈՂԻ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Գուղարիոյ համար
սարկիս 12 ժր.
Վեցամսեայ 6 »
Առսասնակեանի
համար սարկիս 15 »
Վեցամսեայ 8 »
Անրեկայի համար
Տարիկան 3 ժր.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆՈՒՅԻ ՎՃԱՐՆԻ

Պատկերման տղր ասա-
ցին երեսին համար 40 ս.
իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանսիլ է. երեքեկ
սակի սակարկեան համար
20 ՕՍ գեղը կըլլայ:

Վառնայի համար ձեռքի 10 սանսիլ

ՇԱՐՋՈՒՄ

Համակ եր գրում դիկի
նրազորութանն սոս.

а на ВЪСТНИКЪ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

Երեքսանկ եր յեկ տուե
Առսասնակեանի ձեռքի

•) 20 ՍԱՆԹԻՄ (
Գուղարիոյ համար ձեռքի
× 15 ՍԱՆԹԻՄ ×

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂՂՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԵՐԻ ԵՒ ՇՈՐԱԹ ՕՐԵՐԸ

ՇՈՐԹՈՒՄԻ ԼՈՐ ԲԱԺԱՆՈՂԻ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԺՆԵՐԻՆԸ ՊԷՏԻ Ե ԿԱՆՈՒՅԻ ՎՃԱՐԻ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՍՏ-
ԳՈՒՄԱՐԸ

Անցեալ անգամ հրատարակե-
ցինք Եւրոպայի Հայ Ուսանողա-
կան Միութեան հինգերորդ հա-
մագումարի օրակարգը: Անշուշտ
ընթացողները այդ օրակարգը
կարդալով, տեսան որ Ուսանո-
ղական համագումարի զբաղման
նիւթերը ամբողջովին հայ ժո-
ղովրդին են նւիրված:

Այդ օրակարգի մէջ չեն մտա-
ցել զեռնակը հայ օրիորդին. հայ
կնոջը. հայ յեղափոխութիւնը,
թիւրքահայ գրականութիւնը,
Հայր Ալիշանին, Նալբանդիանին
ևս վախճան արդի հայերի գրու-
թիւնը, հայասէր Եւրոպացիներ
ին են:

Այդ ապացուցանում է որ Ու-
սանողական Միութիւնը չի մտա-
ցել ոչ մի հրատապ խնդիր, որով
հետաքրքրվում է հայը և որը
կապ ունի հայ մտաւոր և բարո-
յական կեանքի հետ:

Այդ ապացուցանում է և այն,
որ Եւրոպայի Հայ Ուսանողա-
թան մեծ մասը տանջվում է
հային տանջող ցաւերով, խն-
դիրներով և կարելի եղած ճի-
ւղերն է թափում օգտակար հան-
գիտանալ մեր պէս պէս ցաւերին
զարման տանելու գիւտարին գոր-
ծին:

Ուսանողական Միութեան մո-
տիկ անցեալի գործունէութիւնը
մեզ համար կարող է գրաւական
լինել որ այս անգամ էլ համա-
գումարի մէջ օգտակար որոշում-
ներ պէտք է տրվեն, և այդ ո-
րոշումները լոկ որոշումներ չը
պէտք է մնան, այլ պէտք է գոր-
ծադրվեն:

Չորրորդ համագումարում որոշ-
վել էր հայերի Եւրոպացիների
հետ ծանօթացնել մեր անցեա-
լով, ներկայով և ձգտումներով:
Եւ Միութեան կարգադիր
Յանձնաժողովը միջոցներ ձեռք
առաւ լուրջ, բայց և փայլուն
կերպով կատարելու այդ որոշում-
ները: Նա ձեռնարկեց ֆրանսե-

րէն լեզուով մի մեծ, լուրջ և
բազմակողմանի հայապատում հը-
րատարակելու. աշխատեց նշա-
նաւոր Եւրոպացիների ձեռքով
հայասնպատ քօնֆէրանսեր սար-
քել, այդ կօնֆէրանսերից մին
տեղի ունեցաւ ժընէվում, ուր
հռչակաւոր Պրէնսասէն ի լուր
աշխարհի յայտարարեց թէ՛ զա-
ռամած և յետ քայլող Եւրոպայի
ազատասէրներին մնում է միայն
միանալ Արեւելքի գործող յեղա-
փոխականներին և աջակցել նը-
րանց:

Դեռ ոչ մի Եւրոպացի կենդա-
նի լեզուով և այդ բան յարգանքով
չէր խօսած հայ ժողովրդի, մա-
նաւանդ մեր յեղափոխականների
մասին: Այդ խօսքերը արձագանք
տուին ամբողջ Եւրոպայում:

Այո, Ուսանողական Միու-
թիւնը կարող է շատ օգտակար
լինել մեր ժողովրդի համար,
մանաւանդ Եւրոպայում համա-
կիրներ գրաւելու և ի նպաստ
մեզ հանրային կարծիք ստեղծ
ծելու գործում:

Բայց նրան անօգնական չը
պէտք է թողնել. ժողովուրդը
նիւթապէս և բարոյապէս օգնու-
թեան պէտք է հասնի Ուսանողա-
կան Միութեան, պէտք է քայա-
լերէ այդ երիտասարդ ուժերին
ոչ նրանց վարձատրելու համար,
այլ նրանց գործին ուժ աւելի
լայն, մեծ և դրական գոյն ու
թռիչք տալու համար:

Մանաւանդ ժողովրդի այն մա-
տը, որը իր գրպանը գոցել է
յեղափոխութեան համար, որը
ամեն փրկութիւն սպասում է Եւ-
րոպայից, պարտաւոր է քօակի
բերանը բանալ: Ուսանողական
Միութեան համար, որովհետեւ
Եւրոպայի մէջ հասարակական
կարծիք ստեղծելու համար պէտք
են հրատարակութիւններ, պէտք
են կօնֆէրանսներ, իսկ դրանք
առանց ծախսի չեն կարող լինել:

Իրամի վրա գողացող, գրամը
զուր տեղը վատն վելու վրա կա-
կածներ ունեցողները պէտք է

մտածեն, որ ուսանողութիւնը
ներկայացնում է մեր ժողովրդի
ամենամաքուր գասը և նա հա-
սարակութեան օգտին գործած-
վելիք գրամը չի վատնի իւր հա-
ճոյքի համար:

ՎԱՐԴՈ

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Եւրոպական թերթերու յայ-
տարարութեամբ՝ Խրանսվալի գլ
խարոները և Լօրտ Գիշէր բա-
նակցութեան մէջ կը գտնուին
խաղաղութիւն կնքելու համար:

Չը նայելով պօէրներուն տա-
րած վերջին յաղթութիւններուն,
պօէրները իրենք վիրենք ֆիլի-
քապէս թոյլ վիճակի մէջ
կզգան, թէեւ պատրաստ են մին-
չեւ վերջին շունչ կուի մղել:

Անգլիացիներն ալ յոգնած են
երկարատեւ պատերազմէն. մեծ
կորուստները, փոքրամիւթ թշ-
նամիին խնուրանալի քայա-
թիւնը վերջապէս անգլիացիներ
ը դրած են դժուարին կացու-
թեան մը մէջ, և բնական է որ
գոռող Անգլիան պիտի փափաքի
վերջ տալ իրեն բերեցիժը վար-
կարեկող այդ պատերազմին:

Մակեդոնիոյ մէջ նոր խլրտում-
ներ սկսած են: Թուրք շրջա-
նակներու մէջ տարածուած է որ
Պօրիս Սարաֆով Մակեդոնիա ան-
ցած է և զարնանը, իբր սերբերիզ
թուրքիոյ համար, ապստամբու-
թիւն կը պատրաստէ: Թուրք
կառավարութիւնը Սարաֆովին
զուրկը հաղար ոսկիի գնահատեր
է. սակայն դժուար թէ Սարա-
ֆովին զուրկը հաղար ոսկիով
չլացողի մը ձեռքը ինչայ:

Եւրոպական թերթերը կը հա-
ղորդեն որ Չարը սաստիկ բար-
կացեր է ներքին գործոց նախա-
րարին վրայ, որ չէ կրցեր իրե-
ւի ուսանողական խլրտումները

կանխատեսել և արիւնջեղու-
թիւններ տեղի ունեցեր են:

Ներքին գործոց նախարարը
ստիպուեր է հրաժարական տալ
և Չարը ընդուներ է այդ հրա-
ժարականը: Բայց արդեօք ներ-
քին գործոց նախարարի հրա-
ժարականով ուու գժգոհ տարրը
գոհ պիտի մնայ:

Ինչպէս կըսեն, բարի, բայց
չար ու շատ պահպանողական
պաշտօնեաներով շրջապատուած
Չարը հոգեկոտ շատ տաքնապալի
վիճակի մէջ կը գտնուի եղեր,
որովհետեւ ոչ կրնայ իր ուզածի
պէս բաւարարութիւն տալ իր
բարի ձգտումներուն, և ոչ ալ
կրնայ իր օձիքը ազատել պահ-
պանողական և ամենաչնչին ա-
զատութիւն մը ատող ազգեցիկ
պաշտօնեաներու ձեռքէն:

ԿԷՏ

ՏԱՆԻՍԱՐՔԱՑԻ ՀԱՅԱՍԵՐ.
ՆԵՐՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ

«ԲՐՈ ԱՐՄԷՆԻԱ»Ի ԽՐԱԿՐԱԿԱՆ ՄԱՍ-
ՆԱԽՐԻՆ

Քօրեհեակ 5 մարտ 1902

«Բրո Արմենիայի խլրա-
գրական պատասժան Մասնա-
խլրին՝ Պարոնեկր, Ժ. Բիշ-
մանս, Անաթոյ Գրանս, Ժան
Ժօրէս, Յրանիս սր Բրե-
սանս, է. սր Ռօպերթի, Փիլիո
Բիսոս:

Խմբագրական մասնախլրի ձեռ-
նարկութեան նպատակն է ծանուցա-
նել թրքական Հայաստանի նահանգ-
ներուն չափէ աւելի սարսափեցնող
իրերուն կացութիւնը և հանրա-
ջին կարծիք ստեղծել ի նպաստ մար-
տիրոսացած ժողովրդին, որ իրաւունք
ունի վայելելու համակրութիւնը ա-
մեն անոնց, որոնց սրտերուն մէջ
մարդկային զգացումներուն նշուը
մնացած է: Մենք կը շնորհաւորենք
զմեզ, հաստատելով որ մեր երկրին
մէջ-ամենէն հեռի և պղտիկ-քրիս-
տոնեայ հայերու անլուր շարչարանք-
ները 1896ին 1897ին կենդանի հե-
տաքրքրութիւն և կարեկցութիւն
չալժեցին, սրուն հետեւեց հանգա-
նակութիւն մը. հանգանակութեան
զոււարը 100.000 ֆր. համամաստար
ակնածելի թիւին հասու, որ և հա-

յերուն զրկուեցաւ, Քորէնհակի մէջ
ուրինք կիներու շրջանակ մը, որ աշ-
խատելով հիմնած է որրանոց մը թը-
քական Հայաստանի մէջ: Սակայն
համակրական այս ցոյցերը, ինչպէս
և զանազան ազգերու գթասիրական
գործերը Հայաստանի մէջ, կախի-
նք են վշտերու և նեղութեանց այն
ծովին մէջ, որ Հայաստան կը կոչուի:
Ուստի մեր մէջ զաղափարը յայցաւ
երեւակայելի տանջանքներու ենթար-
կուած այդ ժողովրդին գթասիրու-
թեան համազօր դարձանք գանձու-
համար եւ ուրիշ ճամբաներ բանալ:
Մեզի թեցաւ թէ՛ այն նպատակին օգ-
տակար պիտի ըլլայ՝ եթէ ազգերու մէջ,
որոնք իրենց համակրութիւնը յայտ-
նած են մահուան տագնապի մէջ դա-
նուող այս եղբայրներուն եւ քոյրե-
րուն, մերձեցում մը, առանց քա-
ղաքական ո եւ է նպատակի, զուտ
մարդասիրական ընկերակցութիւն մը
հաստատուի: Մենք յոյս ունինք որ
այդպիսի մերձեցումով մը կարելի պի-
տի ըլլայ հանրային կարծիքը մար-
թեցնել եւ հայկական ինչորի մասին
զբոստներ ազգակար բարձրացնել
տալով, զայն միջազգային դատ մը,
խաչակրաց արշաւանք մը դարձնել:
Ու նուէրները, որ այժմ հազարնե-
րով կը հուշուին, այն ժամանակ
հարիւր հազարներ պիտի ըլլան:
Կարծեմք որ ճանխարձայի
պէս երկիրը չէ որ պիտի ըլլայ, բայց
մենք կը խնդրենք որ «Բրո Արմէնիա»-
յի խմբագրական պատուարժան Գա-
նախուստը մեր այս առաջարկը խոր-
հրգածութեան ենթարկէ, մասնակից
ընելով նաեւ հայ դատին ազդեցիկ
Ֆրանսացի բարեկամները:

Եթէ մեր այս գաղափարը ձեռք իրակա
նալի թուի, մենք պիտի առաջարկե-
ինք որ զանազան երկիրներու պատ-
գամաւորներէ համաժողով մը կազ-
մէք: Աւելի աղէկ կըլլայ որ այդ
համաժողովը Բարիպի մէջ տեղի ու-
նենայ, բայց կրնայ ըլլալ նաեւ
Պրիքսէլի, Լահէի եւ Պալի մէջ: Ժո-
ղովին գործը պիտի ըլլայ վիճարա-
նել հայերուն համար սիրտիանքի մի-
ջազգային մասնախմբի մը կազմա-
կերպութեան, եւ քաղաքական կարեւոր
օտկաններու վրայ զօրեղապէս ազդե-
լու եւ շատ ուրիշ պարզ քայլերու
մասին, որոնք պիտի ծառայեն ըն-
կերութիւնը ամրացնելու եւ հասա-
րակաց շահագրգռութիւնը զէպի այդ
արեւմտեան եւ անոր մշտական սը-
գաւոր դաւակները պահպանելուն:

Մենք յոյս ունինք թէ՛—երբ ան
հիմունք—այս քայլը յաջողի ան-
հետեանք չը պիտի մնայ, քանի որ
վերջերս հայկական խնդիրը հարցա-
պնդումներու նիւթի եղաւ երբք զա-
նազան երկիրներու երեսփոխանական
ժողովներու մէջ: Երկու անգամ Բա-
րիպ, մէկ անգամ Պրիքսէլ եւ մէկ
անգամ ալ Լահէ:

Մեզի կը թուի թէ՛ Կիւսթամու Ռու-
սնէի յունվար 20ի հարցապնդումը
մեծ կարեւորութիւն ունի եւ կը սի-
րենք շեշտել արատքին գործոց նա-
խարարին շատ իրաւացի նկատողու-
թիւնը իր ճառին մէջ, որ զորոշուած
էր հայերու հանդէպ եղած համակրու-
թեամբ:

«Ճակատագրական կը թուի, երբ
ժողովուրդները, որոնց ինչքը ան-
պատիժ կերպով կը թալնուի, որոնք
իրենք զիրենք շարունակ անպատիժ
սպանութիւններու ենթակայ կը զբա-
նեն, վերջացնեն ըսելով ամեն բան
աւելի աղէկ է, քայն այն կեանքը
զոր կանցնենք կոտորածի մղձաւան-
ջին մէջ»:

Մնգրելով, պարուններ, որ ընդու-
նիք մեր արտակարգ յարգանքի հա-
ւատարմը եւ մեր ջերմ երախտագի-
տութիւնը այն ջերմ ու անխոնջ պեր-
ճախութեան համար, որով «Բրո
Արմէնիա» պաշտպանեց հայերու դա-
տը եւ մեր առաջարկին նպատաւերը
պատասխան մը յուսով՝ պատիւ
ուրինք ստորագրել:

Ստորագրած են 13 կարեւոր անձեր
«Բրո Արմէնիա»

**ՀԱՄԱԿԱՐԱՆԱԿԱՆ ԽՈՒՎՈՒԹԻՒՆ-
ՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ**

(Տար. Լուսինայ թիւի 6 եւ վերջ
ՎԵՐՈՐՈՎԷԼ 2 Հ Մ Ա Ր Տ)

Իրերի ստիպումով ուսանողները ի-
րենց առջեւ դրված սեսան հետեւեալ
պարզ դիմում—դէպի համալսարանա-
կան անկախութիւնը տաճած տե-
ւանքները որը բաժանուած են եւ պրո-
ֆէսորական ժողովները, անխուստիւն
օրէն ընդհարվում են Ռուսիոյ միա-
պետական ուժերի նկատ. ուրինք պէտք
է որոշել արդեօք այդ ուժերը իբր
սրբութիւն ընդունել, թէ հարեւոր
հէնց այդ ուժերը, որը չարիքի հիմ-
նական պատճառն է:

Երկար տարիներ ընթացքում տե-
ղի ունեցած ուսանողական խռովու-
թիւնները շրջանը երբէք ո եւ է
քաղաքական գոյն ունեցող ցոյցով
չէ՞ր վերջացել: Համալսարանական
խաւերի ազատութեան համար մղված
կռիւը մի պարբերական ձախորդու-
թիւն էր համարվում, բայց ոչ վտան-
գաւոր:

Հասարակութիւնը համակրում էր
ուսանողներին, նոյն իսկ երբեմն
քաջալերում էր նրանց, քանկան
զտեղով որ Ռուսիոյ նման մի երկի-
րի մէջ համալսարանականները ի-
րենց վիճակից դժգոհ լինեն եւ այդ
դժգոհութիւնը յանդէպ օրէն արտա-
յայտեն, առանց մտածելու հեղե-
ւանք—անդրադարձումներ մասին:
Բայց ոչ ոք համալսարանական խո-
վութիւնները չէր նկատում իբր մի
քաղաքական դրոշմութիւն: 1901ի
Պետերբուրգում, Մոսկվայում, Մար-
կովում, Կիւսթամու հղած ցոյցերն ան-
անգամ իբր քաղաքական գործ-
չը նկատուեցին թէ՛ն կարմիր դրոշա-
կը ծածանվում էր, բայց միայն նրա
համար որ ուսանողները պահանջում
էին չնջուած համալսարանից արտաք-
սոված ուսանողներին համար ստեղծված
զինուորական կանոնների:

Ա. ժ. մ. ըստ երեւոյթի մ. ժամա-
նակները փոխվել են. դժգոհութիւ-
նը հետզհետէ տիրապետում է ժողո-
ղրդի զանազան խաւերին. եթէ ու-
սանողները իրանց կազմով յարձակ-
վում են ներկայ ուժերի վրան, բայց
միակ բողոքողներ չեն: Ռուս երի-
տասարդ գործաւորների կուսակցու-
թիւնը որ երկու խումբեր է ներ-
կայացնում՝ սօցիալ-դեմոկրատները
եւ սօցիալիստ յեղափոխականների
խումբերը—միանում են ուսանողնե-
րին:

Հարուստիւն եւ արեւմտեան Ռու-
սիայում է որ սօցիալիստական պրո-
պագանդան մեծ քայլեր է անում
գործաւորների եւ արհեստաւորների
մէջ. Կեդրոնական Ռուսիոյ արդիւ-
նագործական քաղաքների մէջ, Պե-
տերբուրգում, Մոսկվայում, Վլա-
դիմիրում, Բրիանսկում, եւ Տուլայում

բազմանում են կազմակերպված եւ
իրենց երկրի քաղաքականութեամբ
հետաքրքրվելու չափ չուսուորված
գործաւորները. տարեց տարի քա-
ղաքական յանցանքներ համար ձեռ-
բակալվող գործաւորների թիւը ա-
ւելանում է:

Նոյն իսկ Ռաստովի, Տամովի,
Սարատովի նման քաղաքներում ան-
գամ գաղտնի կերպով սպագրվում են
սօցիալիստական բրոշուրներ եւ կու-
չեր. Լեհաստանի եւ Լիտվայի մա-
սին խօսել չե՞ն ուզում:

Այնպէս, համալսարանական խո-
վութիւնները ձգտում են քաղաքա-
կան եւ ընկերական անբուժելի խը-
մորում դառնալ:

1901ի բոլոր մեծ ցոյցերին զգր-
թէ գործաւորները մասնակցեցին
ցոյցերի այս գոյնի շեշտվելն էր զը
կառավարութեան մասնաւոր խո-
վութիւն է պատճառում: Վերջին ա-
միսներում այդ գոյնը աւելի որոշ
կերպով արտայայտվեց: Դեկտեմբե-
րի 2ին Սարկովի ուսանողները հա-
մալսարանից դուրս գալով սկսում են
քաղաքի զխաւոր փողոցներով անց-
նել: Ըստ սովորութեան կաղաքներ
են զրկվում խոտորարների վրա. մի-
քանի ժամ շարունակ ամենավայրենի
բռնութիւն գործ դրվեց: Այդ ցոյ-
ցին հետեւեց նրա նմանը Եկատերի-
նուպոլում. այնինչ այդ քաղաքում
ոչ մի բաձրագոյն կրթական հաստա-
տութիւն գոյութիւն չունի: Այդ տեղ
127 ձեռքակալվածներից միայն 17
ուսանողներ էին: Երկու ամիս յե-
տոյ, փետրվար 2ին եւ 3ին կիւսթա-
մու գործաւորներ միանում են ուսանող-
ներին եւ երկու օր շարունակ, կար-
միր պրոչակր բարձրացրած ցոյց են
անում ու ոստիկանութիւնը եւ գոր-
ծերը չեն կարողանում կալքը վերա-
հաստատել:

Նոյնաման մեծ ցոյց պատրաստ-
վում էր եւ Մոսկվայում փետրվար
9ին. բայց ոստիկանութեան մի ճար
պիկ խողը արգելք հանդիսացաւ:
Ցոյցը պէտք է պեղի ունենալը հա-
մալսարանի քիւլագը, որը զտնվում
է քաղաքի կեդրոնում. սորակին լծո-
րանի դարձաւ քայքայ եւ առանց ս-
տիկաններին հեկոդութեան, գտնելով
քանի են մտնուէ՞ք Այդ մի փակաղը
էր: Ցոյցարարները թիւը 500ի հաս-
նելուն չէին համալսարանը գաշար-
վում է, դուները զողվում են. դուրսը
գտնուածներին անկարելի է լինում
շարժվել. զրանցից ձեռքակալվում
են մօտ 150 հոգի. այդպէսով չէ յա-
ջողվում փողոցների մէջ ցոյց տնել.
Իսկ բակի մէջ փակված 500 ուսա-
նողներին մնում է միայն հաւաքվել
մեծ դահլէճը եւ մի «Պրոսէ վերարտու-
բացատրել իրենց հաւաքման շար-
ժառիթները. այդ նրանց արգիլվում
է:

Ժամի հինգի մօտերը գալիս են
գրագոները եւ ուսանողներին, ո-
րոնց թոււմ կային եւ ոչ ուսանող-
ներ, առանց ո եւ է դիմադրութեան
հանդիպելու, տանում են Բուտիր-
կայի բանտը: Այդ յանպատրաստից
պեղի ունեցած միտինգի «Պրոսէ վեր-
բալը» ճշդօրէն ներկայացնում է
ներկայ ուսա երիտասարդութեան
մտքի վիճակը:

Ահա բնագիրը.
Մենք, Մոսկվայի զանազան
բարձրագոյն կրթական հաստատու-
թիւնների ուսանողներս, 518 հոգի-
ով, 1902ի փետրվար 9ին ժողովի-
լով, ուսուցիկական ներկայ ուժերի

անբնական վիճակը հետեւանք անք
համարում Ռուսիոյ մէջ սահմանադ-
րական որ եւ է իրաւունքի չը գոյու-
թեան: Ահա այս պատճառով մենք
մշտականապէս հրաժարվում ենք հա-
մալսարանական հողի վրա հիմնված
կառն մղելու ցնորքից:

Մեր երկրի քաղաքական կեանքը չի
կարող մտնել կանոնաւոր զարկաց-
ման շաւղի մէջ. մինչև որ քաղա-
քական եւ ընկերական ուժերը ար-
մատականապէս չը փոխվի անկեւ մեկ
անհասար քաղաքացիական իրաւունք
ները ապահովեցնելով:

Մենք համոզված ենք որ առանց
այդ արմատական փոփոխութեան
ուսա կեանքը մի քայլ անգամ չի կար-
ող յառաջդիմել եւ երկրի անհասա-
լաւ ուժերը պարբերաբար պէտք է
խլվեն հասարակութեանց: Մենք
պահանջում ենք յայտարարել:

1. Արևալ կարգուս (երաշխաւորով
բանտից ազատվելու օրէնք)
2. Մամուլի ապատեթիւն.
3. Ազգի ազատութիւն.
4. Հաւաքութեանիւն եւ ընկերակցու-
թիւնների ազատութիւն.
5. Բոլոր պաշտօնեաների անմի-
ջական պատասխանատուութիւն.
6. Ընդհանուրի համար մատչելի
կրթութիւն.
7. Կանանց համալսարանի ստեղծու-
աղատութիւն.

Ցիրուածներին հաւասարութիւն
ամեն պղտութիւնների համար:
Գործաւորների հետ միասին մենք
պահանջում ենք.

- 1-8 ժամվայ աշխատութիւն:
 - Գործաւորի իրաւունք
- Անկարող լինելով ենթադրել որ
ներկայ կառավարութիւնը քնդու-
նակ լինի հասարակական ուժերի վե-
րակազմել, մենք դիմում ենք յայտ
Ռուսաստանին, որը մտածում է եւ
քաղաքականապէս հասունցել է. Մենք
ուզում ենք նրան ցոյց տալ որ մի
սահմանադրական ժողով ստեղծելու
ժամանակը հասել է:

Փետրվար 9ին ձեռքակալված 510
ուսանողները անկեւ կառավարան
նախարարի ձեռնադրու յարաքովեցին
համալսարանից եւ դրոշմին քիւլերի
գործերի նախարարի սպանմանը թեան
տակ:

Ես երեւոյթին նրանք քնդրել էլ
Սիբիւ պիտի քնդրեն, առանց
դատարանի, 1-58 յայտարարել:

Դժուար է գուշակել թէ Յայս յու-
րը ցոյցերին վերջ պէտք է ու-
նենան. խիտ միջոցներով ճիշդ է
որ կառավարութիւնը պէտք է կար-
ողանայ խեղդել այս սպտոպաքական
շարժումները բայց միամտութիւն էնա-
եւ կարծել, ինչպէս կ'ամուս են յեղա-
փոխական թերթերը, թէ այժմ հը-
նարար կը լինի կէն փոփոխութեան
տաճրել:

Մոսկվա Տիտ Զդէչնի

ՄԵՑ ՊԱՎԱՍՏՈՒԹԻՒՆ

III

Արդեօք քննադատութեան բացա-
կայութիւնը չէ՞ պատճառ որ արտա-
սահմանի մէջ ոչ պատճառն էր ոչ
փարգմանուած լուրջ աշխատութիւն-
ներ կը հրատարակուին:

Այս քանի մը տարիներու ընթաց-
քին մէջ ոչ մէկ աչքը զարնող աշխա-
տութիւն մը լոյս տեսաւ. ոչ զիտա-
կան եւ ոչ գրագիտական: Եւրոպա-
յի մէջ ապրող մեծ քանակութեամբ
զբաղէտ յորջորջուած հայեր կը զբա-

ՀԱՆԴԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Չափցերիոյ ճիւղն քաղաքէն, պարոն Լազարէն Պետրոս Սէրէմ- ճեանի աշխատութեանց հրատարակութեան համար ստացանք հինգ ոսկի ֆրանք: Ուրիմն նախորդ 131 լէֆ 65 սանթիմի հետ հիմա խմբագրութեանս քով կը գտնուի 137 լէֆ 30 սնթ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սէլանիկի վերաբերին [մէջ], Մութուլօօ գիւղի քովերը պուկար հրոսախումբ մը ընդհարում ունեցեր է թուրք սուրկաններու հետ: Թուրքերէն 7 հոգի սպանուեր են, պուկարներէն երեք: Առհասարակ Մակեդոնիոյ մէջ յուզում կը տիրէ:

— Թուրք կառավարութիւնը կը պարտաստուի մեծ ռազմափորձեր ընել Մակեդոնիոյ մէջ:

— Պուլտոյ յունաց պատրիարքը և շատ մը յոյն եպիսկոպոսներ Պուլթանէն շքանշաններ նուէր ստացեր են, որովհետեւ Երլտըզի հրամանով պատրիարքը ժնէւի յոյն ուսանողներուն թելագրած է եղեր ժընէւի մէջ ինպատ թուրք կառավարութեան ցոյց մը ընեն:

Սուլթանը յանձն առած է այդ ուսանողներուն ամսաթոշակ վճարել մինչեւ իրենց աւարտելը: Իսկ աւարտուէն վերջն ալ պետական ծառայութեան մէջ ընդունիլ:

— Թէհրանէն կը հազորդեն թէ խոյի մէջ չապրող հայ յեղափոխականները և փախստականները կը պատրաստուին թրքական սահման անցնիլ հոն խռովութիւններ հանելու համար:

— Պուկար-թուրք սահմանագլխին վրա-Սարը թաշ-թուրք և պուկար սահմանապահ գինետորներու մէջ ընդհարում տեղի ունեցեր է:

— Սելանիքի նահանգապետ Թէֆիգ փաշա մեծ վէպրի թելագրութեամբ պաշտօնանկ եղած է իրբու կառավարիչ անընդունակ ըլլալու պատճառով: Անոր տեղը նշանակուեր է Հասան Ֆէհմի փաշան, որ Պուլտոյ մէջ կարեւոր փաստաբան եղած է:

Հասան Ֆէհմիի նշանակումը լաւ տպաւորութիւն գործած է զիւսնագիտական շրջանակներու մէջ:

— Հայ ուսանողներուն համագումարը մեծ իրարանցում ձգեր է Երլտըզի մէջ: Սուլթանը հրամայեր է Բարիլի գետպան Միւնիր պէյի և Ժընէւի թուրք հիւ-

պատտին ամեն միջոց ձեռք առնել արգելք հանդիսանալու այդ համագումարի կազմուելուն:

— Այն լուրը որ կը հազորդէր թէ Չինովիէֆ Սուլթանին յայտարարած է «եթէ Մակեդոնիոյ և Հայաստանի մէջ բարենորոգումներ չը մտցուն, Աւստրիա Մակեդոնիա պիտի մանայ, իսկ Ռուսիա Հայաստան» լուրին անհիմն է:

Ընդհակառակը Չինովիէֆը Սուլթանին յայտարարած է որ խռովարարները խստիւ պատժուին, իսկ խաղաղ բնակչութեանը փաստ մը չը հասցուի:

— Պուլտէն կը հազորդեն որ մօտերս Ատանայի մէջ տեղի պիտի ունենայ կիլիկիոյ հայոց կաթողիկոսին ընտրութեանը:

— Չինովիէֆ Սուլթանի յայտարարած է որ ռուս և աւստրիական կառավարութիւնները պոքկար կառավարութեան թելագրած են անպայման կերպով արգելք հանդիսանալ մակեդոնական շարժումներուն, ու պուկար կառավարութիւնն ալ խոստացած է այդ պահանջը կատարել:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

«Թան» վերապահութեամբ կը հազորդէ որ Յինլան ռոյ մայրաքաղաքին՝ Հելսինկիօրսի մէջ ֆին մը ատրճանակով սպանութեան փորձ ըրեր է Յինլանտիոյ կառավարչին դէմ, զբօսնած միջոցին բաց չէ յաջողեր: Փորձ ընողը իսկոյն անյայտացեր է, զայն գտնելու համար եղած ամեն խուզարկութիւնները ի զուր անցած են:

— Իրկուտսկէն կը հազորդեն որ Անգլո-ճաբօնական դաշնագրութեան հռչակուելէն յետոյ Սիպրիոյ երկաթուղին զբաղուած է միայն զօրքերով և ռազմամթերքով, որ Վլատիվաստօք կը տարուին:

— Ներքին գործոց նախարար Սերիագինի հրաժարման պատճառը կիլիկիոյ զօրաց հրամանատար Տրակօմիրօֆ կը համարուի, որովհետեւ ուսանողական խռովութիւնները ճնշելու ձեռն հետ ձէ համաձայնած և արիւնհեղութեան պատասխանատուութիւնը նախարարին վրայ ձգելով Տրակին բողոքած է անոր դէմ:

— Վարչապէն Վիէննայի թերթերուն կը գրեն թէ ձերբակալուած գնդապետ Կրիմ, որ գաղտնիքներ ծախած է օտար պետութիւններու, ոչ թէ գերմանացի, այլ ռուս է: Կրիմի հետ ձերբակալուած են ուրիշ հինգ անձեր: Կրիմի գլխաւոր գործակիցները երկու կիներ են. կիներէն մին նոյնպէս ձերբակալուած է:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Հօլանտական կառավարութիւնը անգլիական կառավարութեանէն արտօնութիւն խնդրած է շարժական հիւանդանոցներ շրկել Պօէրներուն: Անգլիական կառավարութեան պատասխանը Լահէի մէջ դեռ ստացուած չէ: Կենթադրուի որ ուշանալուն պատճառը այն է որ կառավարութիւնը Լօրտք Բիշնէրէն կարծիք ուզած է այդ մասին:

Հօլանտական շատ մը պօէրասէր ընկերութիւններ շարունակ առատ նուէրներ և դրամ կտանան Պրանսայէն, Գերմանիայէն և Ռուսիայէն:

— Անգլիոյ Թագաւորը երկար տեսակցութիւն մը ունեցեր է արտաքին գործոց նախարարին հետ: Կը կարծուի որ այդ տեսակցութիւնը խաղաղութեան բանակցութիւնների մասին եղած է: Ըստ երեւոյթին թագաւորը իր շրջապատողներէն չի թագցնէր որ ինք կուզէ վերջ մը տրուի Խրանսվալի պատերազմին:

Ա Ւ Ս Տ Ր Ի Ա

Լիմպէրկէն կը հազորդեն որ կալիցիոյ Խարանբուլ քաղաքին մէջ հակազբմանական մեծ ցոյց մը տեղի ունեցեր է լեհացիներու կողմէն:

200էն աւելի ուսանողներ, գործաւորներու հետ միասին, Ռիխթէրի, որ Բրուսիացի է, ցիրքին դիմաց ցոյց ըրեր են: Յիւրքը շատ փաստեր է. 20ի շափ ուսանողներ ձերբակալուեր են. գիշերը ցոյցը կրկնուեր է ցիրքին և բանտին առջեւ: Ամբօխը հետզհետէ աւելի սպառնական դիրք ընդուներ է, և կառավարութիւնը ստիպուեր է ձերբակալուած ուսանողները արձակել:

Յիրքը անմիջապէս քաղաքէն հեռացեր է:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Պուկարիոյ նախարարապետ պարոն Տանէֆ արդէն իէթերապուրիկ հասած է:

Հասնելուն երկրորդ օրը այցելած է ռուս արտաքին գործոց և միւս նախարարներուն:

— Մակեդոնական ներկայ կօմիտէի և Սարաֆօլի կուսակիցներու մէջ տեղի ունեցած վէճերը հետզհետէ կը սաստկանայ, երկուստէք յարձակումները—մեր կացումները և իրար մրոտումները կը կրկնագտակուին:

Յաւօք սրտի կը նկատենք որ Մակեդոնացիներն ալ չը կրցան խուսափել այդ շարիքէն, որ վերջին քանի մը տարիներու ընթացքին մէջ հայ յեղափոխականները ևս զբաղեցուց ու զեռկղբացնէ:

ԿՕՏԻԿԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հայրապետ Սարգսեան «Բրէսլաւ» կա մեծ պօզտային վրայ: Ամենաբնութիւ պարանքէ պատրաստի եւ մասնաւոր պատէրով կօշիկներ, գնեքը չափաւոր: Վստահ ենք թէ յաճախողները գո՛ր պիտի մնան ամեն կերպ: Վառնա

L'EUROPEEN

Շարաթաթերթ քաղաքական, միջազգային քրիստոնէի, բնկերական հարցերու, գրական և զեպարուեսական:

Տարեկան 15 ֆր. Վեցամսեայ 8 ֆր.

Հասցէ 24 rue Dauphine Paris VI

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ Ուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով:

Իւնիօն Տէ Զ'իյիսիան Արմ. Լ'Եօրոք Բիւ Տը Լ'Եֆօյ Տը Շիւի 2

Սուխ ժընէզ Կարգողիւ Յունանաճողով

Գ Ո Ւ Թ Ա Ն

Հանդիս ամսեայ, հոդադրօսական, զիտական եւ արուեստագիտական

Հիմնադիր տնօրէն Գարեգին Ը. Մեծաւորեան

Հրատարակուած է Ըրգ Թիւր, շահեկան բովանդակութեամբ:

Տարեկան բաժնեդիրն 12 ֆր. դիմել հիմնադրին, 23 rue de la օթօլճօլլ

ԽՄԱՍԳՐՈՒԹԻՒՆ ԳՆԱՐԺՈՒՄ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորմս, հասցեւորմս, նամակազուրու, հարսանեկան հրատարակիչ, մահազգ:

Գիները յոյժ դիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՉՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻԿ

Իրաւը կանխիկ ՍԻՄՕՆ ՆԱՀԱՊԵՏ և Ընկ. Ս. Ժիով. Գրքաստան 5745

(Մտալիս) Վէնկոյի Կոմիտէի և Սարաֆօլի կուսակիցներու մէջ տեղի ունեցած վէճերը հետզհետէ կը սաստկանայ, երկուստէք յարձակումները—մեր կացումները և իրար մրոտումները կը կրկնագտակուին:

Յաւօք սրտի կը նկատենք որ Մակեդոնացիներն ալ չը կրցան խուսափել այդ շարիքէն, որ վերջին քանի մը տարիներու ընթացքին մէջ հայ յեղափոխականները ևս զբաղեցուց ու զեռկղբացնէ:

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна